ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2023/92

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2023 թ. N 92

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«**Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ**
Գործունեության հասցեն՝	ՀՀ, 0002, ք. Երևան, Թումանյան 42,
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով 18.12.2019-19.12.2023

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023 թվականի դեկտեմբերի 26-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի** (այսուհետ՝ ԲՊՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	29 նոյեմբերի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	30 մարտի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝	06-09 հունիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	09 հոկտեմբերի 2023թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	10 նոյեմբերի 2023 թ.

«Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԲՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԲՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը և համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-Ի 6-8-րդ մակարդակների պահանջներին: Նախորդ հավատարմագրումից հետո իրականացված համեմատական վերլուծությունների արդյունքում վերանայվել և բարելավվել են հաստատության ՄԿԾ-ները: Հստակեցվել են գործնական կարողությունների զարգացմանը նպաստող վերջնարդյունքները, շեշտադրվել է լեզուների խորացված ուսուցումը տարբեր կրթական ծրագրերում, ինչը որոշակիորեն մրցակցային առավելություն է տալիս բուհի շրջանավարտներին աշխատաշուկայում: Կիրառվում են դասավանդման, ուսումնառության, գնահատման տարբեր մեթոդներ, որոնք նպաստում են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը:

ՄԿԾ-ների իրականացման համար համալսարանն ապահովված է անհրաժեշտ որակավորմամբ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերով:

ԲՊՀ-ում գործում է ՊԴ և ՈւՕ կազմերի ընտրության հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: ՊԴ կազմը բազմազան է, ներգրավված են ինչպես պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ, այնպես էլ գիտության թեկնածուներ և դոկտորներ, առկա են օտարազգի լեզվակիր դասախոսներ: Որոշակիորեն ներդրված են ՊԴ կազմի գնահատման մեխանիզմներ, առկա է ՊԴ կազմի զարգացման և կատարելագործման միջավայր:

Վերջին 5 տարիների ընթացքում իրականացվել են գործողություններ ուղղված ուսումնական միջավայրի բարելավմանը, առկա է որոշակի առաջընթաց ֆինանսական կայունության և ֆինանսների կառավարման տեսակետից:

ԲՊՀ-ում գործող կրթական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունը հիմնականում ապահովում են ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Ներկայումս Համալսարանը գտնվում է անցունային ճգնաժամային կառավարման փուլում: ԲՊՀ-ն ունի ռազմավարական պլանավորման որոշակի փորձ: Սակայն միջնաժամկետ պլանավորման բացակայությունը, գործողությունների կատարման ժամկետների անհստակությունը և ֆինանսական ռեսուրսների ոչ հստակ պլանավորումը կարող են խանգարել խնդիրների հետևողական իրականացմանը: Չեն գործում երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Վերջին 4 տարիներին տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ, որոնք հիմնականում խորը վերլուծված և հիմնավորված չեն, ներքին շահակիցներն ամբողջապես իրազեկ չեն իրականացվող փոփոխություններից: Կառավարչական տարբեր գործընթացներում լիարժեք ներդրված չէ ՊԻԳԲ շրջափուլը, որոշումները չեն կայացվում օբյեկտիվ տվյալների վերլուծության հիման վրա:

Բուհի ՈԱ կենտրոնը գործարկվել է 2009 թվականի: Որակի ապահովման ոլորտում ԲՊՀ քաղաքականությունը ներառված է «Որակի ապահովման ձեռնարկում», որը դեռևս ամփոփման փուլում է և հաստատված չէ:

Տվյալների հավաքագրումը տեղի չի ունենում պարբերական և արդյունքները ժամանակին չեն վերլուծվում: Հավաքագրված տվյալները ոչ միշտ են հիմք հանդիսանում որոշումների կայացման համար: Չի գնահատվել որակի ապահովման համակարգի ազդեցությունը բուհի գործընթացների բարելավման վրա:

Բուհի ղեկավարությունը կարևորում է որակի ապահովման համակարգի զարգացումը, սակայն համակարգի և կենտրոնի լիարժեք անկախությունը դեռևս ապահովված չէ, ինչը խոչնդոտում է առավել քննադատաբար խնդիրների բացահայտմանը:

Կառավարման ու որակի ապահովման համակարգերը դեռևս ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

ԲՊՀ-ում առկա է ներքին և արտաքին հաշվետվողականության կայուն համակարգ, գործում են հետադարձ կապի ապահովման տարբեր մեխանիզմներ: Գործընթացների թափանցիկությունն ապահովելու նպատակով գործում են տարբեր հարթակներ, հասարակությանը գիտելիքներ և արժեքներ փոխանցելու նպատակով կազմակերպվում են տարբեր դասընթացներ:

Համալսարանի առաքելությունում և ռազմավարական ծրագրում գիտահետազոտական գործունեությունը բուհի առաջնահերթություններից է: Սակայն դեռևս զգալի արդյունքներ չեն գրանցվել: Առկա չեն միջնաժակետ և կարճաժամկետ ծրագրեր: Սահմանված չեն հետազոտության ոլորտում արդյունքների գնահատման չափելի ցուցիչներ, ներդրված չեն ներքին դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ: ՊԴ կազմը և ուսանողները մոտիվացված չեն իրականացնելու հետազոտական աշխատանքներ: Հետազոտական աշխատանքներում ՊԴ կազմին խրախուսելու և ներգրավելու մեխանիզմներն արդյունավետորեն չեն գործում: ՄԿԾ-ներում թույլ է արտահայտված հետազոտություն և ուսումնառություն կապը:

Համալսարանը դեռևս լիարժեք չի օգտագործում ՊԴ կազմի գիտական ներուժը՝ միջազգայնացնելու հետազոտությունը, ինչպես նաև ներգրավելու միջազգային ուսանողներ: Հետազոտությունների միջազգայնացման առումով խնդիրները բուհի ղեկավարության օրակարգում են, նկատելի են դրական միտումներ:

Միջազգայնացման ուղղությամբ Համալսարանի ձեռքբերումները շոշափելի են և իրենց ազդեցությունն ունեն կրթական ծրագրերի վրա: ԲՊՀ-ն ունի բավականաչափ պայմանագրեր և համաձայնագրեր տարբեր հեղինակավոր միջազգային կառույցների հետ, որը նպաստում է ուսանողների և դասախոսների շարժունությանը, դասախոսախոսական կազմի փորձի փոխանակմանը և մասնագիտական աճին: Ուսանողները, ՊԴ կազմը և վարչական աշխատակիցները տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի, որն առավել դյուրին է դարձնում միջազգային գործընկերների հետ հաղորդակցումը:

ԲՊՀ-ում անցկացվում են նաև մի շարք օտար լեզուների տարբեր մակարդակների համար միջազգային քննություններ, որի արդյունքում շնորհվում են միջազգային վկայագրեր:

ԲՊՀ-ն ակտիվ քաղաքականություն է վարում ուսանողների հավաքագրման և ընդունելության ուղղությամբ, ինչը վերջին տարիներին ապահովում է ընդունվողների թվի աճ՝ աճել է հեռակա ուսուցման ձևով ընդունելությունը, իսկ առկա ուսուցմամբ և մագիստրատուրա դիմնողների թիվը նվազում է:

ԲՊՀ-ն ունի շրջանավարտների զբաղվածության բարձր մակարդակ, ինչը փաստում է, որ համալսարանի կողմից տրամադրվող կրթությունը տալիս է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - պրակտիկաների արդյունքում ուսանողների ակնկալվող վերջնարդյունքների և պրակտիկաների գնահատման հստակ չափանիշների մշակմանն ու ներդրմանը,
   - ուսանողների գնահատման բոլոր փուլերում ակադեմիական ազնվության ապահովման միասնական մեխանիզմների կիրառմանը,

- ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու խրախուսման մեխանիզմների ներդրմանը,
- Համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը,
- հետազոտություն և ուսումնառություն կապն առավել ամրապնդելու անհրաժեշտությանը,
- ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների կանոնակարգմանն ու վերահսկմանը՝ առաջնահերթ հեռակա բաժնում սովորող ուսանողների,
- արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների արդյունքների ապահովման չափելի քանակական ցուցիչների, ինչպես նաև արդյունավետության մշտադիտարկման համակարգային մեխանիզմների ներդրմանը:

4. Կազմակերպել ԲՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԲՊՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. դեկտեմբերի 26
ք.Երևան